ԱՄԵՆԱԽԵԼՈՔ ՄԱՐԴԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Թե ոնց ա ըլըմ, օրերից մի օր մի թաքավորը հրամայըմ ա իրա երգրի ծերերին սըպանեն։ Դե թաքավորի հրաման ա, ո՞վ կարա դեմ կանգնի, ինչքան պառավ ա ըլըմ, սպանըմ, սուրդուն են անըմ։
Շատ ա անց կենըմ, քիչ, մի օր էլ թաքավորի քաղքըմը մի ջանավար վագրն ա լիս աշխարք ընգնըմ, սկսըմ ա ժողովրդին կըտորիլը։ Քաղաքի մեջտեղը մի աղբուր ա ըլըմ, էդ անտերը նստըմ ա աղբրի կողքին, ու ոչ մի մարդ ռիսկ չի անըմ ջրի գնա։ Դե տղա ես մոդացի, ձեռաց փշրտորըմ ա։ Սիրտ չեն անըմ էդ անօրեն գազանին սըպանեն։
Թաքավորի զինվորներից մինը, մի ջահել տղա, իրա հորը թաքուն պահած ա ըլըմ։ Գնըմ ա էդ զուլումի մասին հորը պատմըմ, թե.— Այ հեր, վագրը ժողովրթի գլխին պատիժ ա դառել։
Հերը տղին ասըմ ա.— Այ տղա, ես որ դուս գամ, թաքավորը կիմանա հա՛մ իմ գլուխը կտա, հա՛մ էլ քունը։ Էդ զուլումիցն ազատվելու հնարը գիդեմ, ոնց ասեմ, նհենց էլ կանես։ Մի մենձ հայլի վեր կունես, կտանես վագրի վրա։ Գազանը հենց որ իրա պատկերը տենա, կսարսափոտի, հենց կիմանա մի ուրիշ գազան ա իրա վրա հարձակվըմ, կթողա, կփախչի։ Ոնց որ հերն ասըմ ա, տղեն թհենց էլ անըմ ա։
Վագրը հենց որ իր ա պատկերը տենըմ չի՛, գլուխն առնըմ ս, կոըչըմ, հլա ուրիշից էլ չորս ոտն ա փոխ առնըմ։ Էն գնալըն ա ըլըմ, որ գնըմ ա։ Ժողովրդի աչքը լիս ա գալի։
Թաքավորն էդ բանն իմանըմ ա, ձեռաց գլխի ա ընգնըմ, որ ըստի մի բան կա, էդ ջահելի արած բան չի, ծերերին էլ սըպանել են։
Էդ տղին կանչըմ ա ու թե.— Այ տղա, էդ քու խելքի բան չէր։ Հլա դուզն ասա, ո՞վ ա սըվորցրել, որ թհենց վագրին փախցընեն։
Տղեն ի՞նչ կարա անի, ահը սրտըմը պատասխանըմ ա.— Թաքավորն ապրած կենա, վերև աստված, ներքև դու, ասսուց թաքուն չի, քեզանից ինչ թաքուն ըլի։ Որ դու հրամայեցիր ինչքան ծեր մարդ կա՝ սըպանեն, իմ ձեռը վրա չեկավ. հորս սպանեցի ոչ, քու ստրուկն եմ, ինչ ուզըմ ես արա, էդ բանը հերս սվորցրուց։
Թաքավորը տղի թիգունքին տալիս ա ու ասըմ.— Ամենախելոք մարթը դու ես, որ քու հորը սըպանել չես։